



Foundation for Advancement of Moldova

Կարևոր Է Յուրաքանչյուրը Everybody Counts



«Կարևոր Է յուրաքանչյուրը. Հայաստանի գյուղական համայնքների երիտասարդների զորացման ծրագիր»

Ծրագրի նպատակն է Հայաստանի մարզերի գյուղական և քաղաքային համայնքներում բնակվող երիտասարդների զորացումն ու նրանց կարողությունների զարգացումը:

Դասընթացների, տեղեկատվական հանդիպումների և քննարկումների միջոցով ծրագիրը խթանելու է մասնակիցների անձնային և մասնագիտական զարգացումը՝ ծանոթացնելով նրանց ավելի ներգրավված և ակտիվ քաղաքացիներ դառնալու հնարավորությունների հետ և խրախուսելով նրանց ակտիվ մասնակցությունը համայնքի կյանքին:

Թիրախային խումբ՝ 16-25 տարեկան երիտասարդներ, ովքեր բնակվում են Հայաստանի մարզերում

Դասընթացների թեմաներ՝

- Հայկական աշխատաշուկայի մասին տեղեկատվություն
- Աշխատանքային հարցազրույց անցնելու հմտություն
- Ինքնակենսագրականի կազմում
- Ճարժառիթային (մոտիվացիոն) նամակ գրելու հմտություններ
- Հայտադիմումի ուղեկցող նամակ գրելու հմտություն
- Դասընթացների, սեմինարների, և այլ կրթական հնարավորությունների մասին տեղեկատվություն

- Եվրոպական կրթական հնարավորություններ (Erasmus +)
- Ճիշտ ԷԼ. փոստի հասցե և նամակ գրելու հմտություններ
- Հայտադիմումների լրացում
- Միջանձնային հաղորդակցություն
- Թիմային աշխատանքի հմտություններ
- Ժամանակի կառավարում

Դասընթացներն իրականացվելու են **2017թ հունիսից օգոստոս** ամիսներին:
 Մանարամասների համար կարող եք գրել՝ dianachobanyan@apy.am ԷԼ.փոստի հասցեին:

Ճրագիրն իրականացվում է Հայ առաջադեմ երիտասարդություն ՉԿ-ի կողմից, Հասարակական նախաձեռնությունների ինստիտուտ (Ուկրաինա) և Մոլդովայի առաջխաղացման հիմնադրամ (Մոլդովա) ՉԿ-ների հետ համագործակցությամբ

Ճրագիրը ֆինանսավորվում է Քաղաքացիական հասարակության ֆորումի Արևելյան գործընկերության երկրների վերագրանտավորման նախագծի կողմից: Իր վերագրանտավորման նախագծի միջոցով Քաղաքացիական հասարակության ֆորումը օժանդակում է ԲՀՖ-ի Արևելյան գործընկերության անդամ կազմակերպությունների այն ծրագրերը, որոնք տարածաշրջանային հարթությամբ նպաստում են ֆորումի առաքելության և նպատակների իրագործմանը: Վերագրանտավորման նախագծի դոնորներն են Եվրոպական միությունը և ժողովրդավարության ազգային հիմնադրամը:



**National Endowment
for Democracy**
Supporting freedom around the world



This project is funded by the European Union